

5.3. 2013 թվականի փետրվար ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, փետրվարին օդի միջին ամսական ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 3-4 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն 1-ին, 2-րդ և 3-րդ տասնօրյակներում եղել է նորմայից բարձր 3-4 աստիճանով: Միջին առավելագույն ջերմաստիճանը ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի հովիտներում կազմել է +9 +12°C, ՀՀ Լոռու մարզում՝ +6 +9°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի նախալեռներում՝ +6 +8°C, Արագածոտնի նախալեռներում՝ +4 +7°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -2 +3°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է փետրվարի 28-ին: Արարատյան դաշտավայրում գրանցվել է +12 +16°C, Սյունիքի հովիտներում և Արագածոտնի նախալեռներում՝ +9 +12°C, ՀՀ Տավուշի և Լոռու մարզերում՝ +5+10°C, Սյունիքի նախալեռներում՝ +6 +9°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +4 +7°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում կազմել է -5 -10°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -15°C), ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ 0 -5°C, ՀՀ Տավուշի մարզում և Արագածոտնի նախալեռներում՝ -2 +2°C, Արարատյան դաշտավայրում՝ -1 +1°C, Սյունիքի հովիտներում՝ 0 +4°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է փետրվարի 5-6-ին: ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում գրանցվել է -10-15°C (Աշոցք գյուղում՝ -27°C), Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ -4 -8°C, ՀՀ Լոռու մարզում՝ -3 -7°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ -1 -4°C (ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -11°C), Սյունիքի հովիտներում՝ -2 +2°C:

Ամսական տեղումների քանակն Արարատյան դաշտավայրում կազմել է նորմայի 63-198%-ը, ՀՀ Շիրակի մարզում՝ 62-97%, ՀՀ Կոտայքի մարզում՝ 72-84%, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 69-129%, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 34-141%, ՀՀ Լոռու մարզում՝ 17-47%, ՀՀ Տավուշի մարզում՝ 35-62%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 81-159%:

Փետրվարի 2-ին, 12-13-ին տարածաշրջանների զգալի մասում, 1-ին, 3-ին, 7-ին, 16-21-ին և 23-28-ին առանձին վայրերում դիտվել են տեղումներ: Փետրվարի 1-2-ին, 4-13-ին, 15-17-ին, 19-21-ին և 26-27-ին առանձին կայաններում դիտվել է մառախուղ 40-500 մ տեսանելիությամբ: Փետրվարի 2-4-ին, 7-8-ին, 12-13-ին, 15-16-ին և 27-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 8-18 մ/վրկ, պոռթկումները՝ 15-25 մ/վրկ: Փետրվարի 28-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունն Արագած բարձր լեռնային կայանում (3 229 մ) կազմել է 183 սմ, Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 122 սմ, Աշոցք գյուղում՝ 90 սմ, Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 89 սմ, Անանուն լեռնանցքում (ՀՀ Արարատի մարզ)՝ 82 սմ, ք. Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 76 սմ, ք. Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 73 սմ, Սեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 72 սմ, Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 68 սմ, ք. Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ 63 սմ, Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 45 սմ, ք. Արթիկում և ք. Գյումրիում (ՀՀ Շիրակի մարզ)՝ համապատասխանաբար 30 սմ և 29 սմ, Պուշկինի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ) և ք. Մարտունիում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 15 սմ, մնացած շրջաններում՝ հիմնականում 5-15 սմ: ՀՀ Տավուշի մարզում, Արարատյան դաշտավայրում, Արագածոտնի նախալեռներում և Սյունիքի հովիտներում ձյան ծածկը բացակայել է:

ՀՀ գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 90-130%-ը, իսկ Արփայի ավազանի գետերում՝ 160-220%: Սևանա լճի մակարդակը փետրվարի ընթացքում բարձրացել է 4 սմ-ով և փետրվարի 28-ի դրությամբ կազմել 1 900.13 մ, որը 2012թ. նույն օրվա համեմատ ցածր է 6 սմ-ով: